



# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՀՈՐԵԶՆԱԲԹԻ, 15 ՀՈՒՆԻՍԻ 2015Թ.  
№ 20 (363)

**...Խոսքի  
շահույթունը  
դաժե՛րագնում է  
լսելիքի դեմ:**

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀՍԼԻ



**Կաթի գնի  
տարանուժներ.  
հիմնավորվա՛ծ են,  
թե՛ ոչ**

**Վերանշակող  
արդյունաբերություն**

Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հետ կապված հուզումները սովորում թողեցին տնտեսության ոլորտի (այս անգամ գյուղատնտեսության) հետ կապված ոչ նվազ կենսական հնչեղություն ունեցող մի խնդիր: Խոսքը գյուղացուց մթերվող կաթի գնի մասին է: Ամռան այս տարեշրջանում կաթի մթերման գինը բողբոջ ալիք է բարձրացրել: Չնայած ամիսներին կաթ մթերող ընկերությունները գյուղացուց կաթը գնում էին 150-170 դրամով: Գարնան վերջին ամսին գինը սրընթացորեն սկսեց իջնել, եւ այժմ 110 դրամ է առաջարկվում մեկ լիտր կաթի դիմաց: Գյուղացիների դժգոհության փաստարկն այն է, որ մեկ լիտր կաթն ավելի էժան է կես լիտր շշալցված ջրից: Թեեւ պարզ է նաեւ, որ խնդիրը գյուղացու (կաթ արտադրողի) եւ ոչ թե պետական, այլ՝ մասնավոր ձեռնարկության միջեւ է, եւ պետությունն իրավասու է՛ ոչ վաճառքի, ոչ էլ կաթի մթերման գին սահմանել:

## ՍՎԵՏԼԱՆԱ ԻՍԱԽԱՆՅԱՆ. «Հիմնական նպատակս մեր ունեցած կադրերին արժանի փոխարինողներ գտնելն է»

**Առողջադասություն**

Առողջապահության ոլորտում իրականացվող ծրագրերի, համակարգում առկա խնդիրների, հիվանդանոցում կատարվելիք աշխատանքների մասին է զրույցը «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ նորանշանակ տնօրեն, սրտաբան, բժշկական գիտությունների թեկնածու Սվետլանա Իսախանյանի հետ:

Էջ 3

## Հանքարդյունաբերական ձեռնարկությունների արհմիությունների դերը պիտի վերանայել

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ Սյունիքի մարզում իրականացվում է «Հանքարդյունաբերության աշխատավորների նորաստեղծ միության կարողությունների բարձրացում» ծրագիրը, որի շրջանակներում ստեղծվել է «Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը:

Ծրագրի ընթացքում նախատեսվում է իրականացնել մշտական հանդիպումներ հանքարդյունաբերական ընկերությունների աշխատակիցների հետ, ովքեր անդամագրվել են հկ-ին: Հանդիպումները տեղի կունենան Ագարակ, Քաջարան եւ Կապան քաղաքներում: Այդ ընթացքում աշխատավորներին կներկայացվեն

նրանց իրավունքներն ըստ ՀՀ սահմանադրության եւ աշխատանքային օրենսգրքի, ինչպես նաեւ միջազգային նորմերի: Աշխատավորները կարող են ներկայացնել իրենց հիմնախնդիրները եւ հուզող հետեւյալ հարցերը՝ աշխատավորի փոխհարաբերությունները, այդ թվում պայմանագրային, աշխատատուի հետ, աշխատավորի աշխատանքային անվտանգության եւ սոցիալական փաթեթի լիարժեք ապահովում:

«Նախնական ուսումնասիրության ժամանակ մասնագետները եկան եզրակացության, որ աշխատավորներն իրավական խորհրդատվության եւ աջակցության լուրջ կարիք ունեն: Իրավունքի չիմացությունն աշխատավորների շրջանում առաջացնում է հուսահատության եւ անպաշտպանության մթնոլորտ: Իսկ մեր հանդիպումներից



քննարկումներից եւ խորհրդատվություններից հետո նկատվում են վստահության նշաններ: Մեր երկրում ամենամեծ թերություններից մեկն էլ բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակն է, որը,

Էջ 5

Սիսիանում կաթնամթերք արտադրող «Սիս ալպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության օրինակով փորձեցինք տեղեկանալ, թե ինչ է կատարվում կաթի վերանշակման ոլորտում, որն է կաթի մթերման էժանության պատճառը:

«Սիս ալպ» ընկերությունը սկսել է արտադրանք տալ 2008 թվականից, արտադրում է երկու տեսակի թթվասեր, մածուկ, կաթնաշոռ, պաստերացված կաթ, իսկ ամռան ամիսներին, երբ կաթի ավելցուկ է լինում՝ պանիր: Արտադրանքի իրացման երկու հստակ հասցե կա. Սյունիքի եւ Վայոց ձորի մարզեր (Ջերմուկի երկու առողջարան, մանկապարտեզներ), փոքր չափով նաեւ մայրաքաղաք եւ առաջում: Աշխատանքներ են տարվում նաեւ մարզկենտրոնում իրացնելու համար:

Ծրագրի չկա՞ սիսիանյան կաթնամթերքը հանրապետությունից դուրս արտահանելու: «Այսօր ռուսական շուկայում գնե՛րը լիարժեք կարգավորված չեն, ցածր են ապրանքների գները, այդքան էլ ձեռնտու չէ այստեղից ապրանք արտահանելը: Իսկ արտահանելու դեպքում մի քանի ընկերություններ կարող են միավորվել եւ իրենց արտադրանքն արտահանել: Ապագայի համար այսպիսի տարբերակ քննարկվում է», – մեր հարցին այդպես է պատասխանում տնօրեն Հուսիկ Ստեփանյանը:

Օրական առավելագույնը երկու տոննա կաթ են մթերում: Հանձնվող կաթի յուղայնությունից դժգոհություն չկա: Կաթն ընդունում են բազիսայինից (3,6 տոկոս) բարձր յուղայնությամբ, ավելի ստույգ ընդունվող հումքի յուղայնությունը տատանվում է 3,7-3,8-ից մինչ 4,2-4,3-ի սահմաններում: «Ինչքան խոտը չորանա, յուղայնությունը բարձրանալու է», – բացատրում է տնօրենը:

Մեզ առավել հետաքրքրում էր մթերվող կաթի գինը, որ նախորդ տարիների համեմատ առավել ցածր է եւ հարուցում է

Էջ 6



# Հեմոդիալիզի բաժանմունք Գորիսի բժշկական կենտրոնում

## Առողջապահություն

Երիկամային անբավարարություն ունեցող մարդկանց բուժսպասարկումը տեղում իրականացնելու նպատակով հուլիսի 10-ին Գորիսի բժշկական կենտրոնում բացվեց հեմոդիալիզի բաժանմունք: Մինչ այդ մարզում մասն բաժանմունք գործում էր Կապանի բժշկական կենտրոնում: Ուստի Սիսիանի և Գորիսի տարածաշրջանների՝ երիկամային խնդիր ունեցող բնակիչները հասնում էին կամ մայրաքաղաք, կամ մարզկենտրոն: Հիվանդ մարդը երկար ճանապարհի անհարմարությունը հաղթահարելուց զատ նաեւ զիջելու խնդիր պիտի լուծեր: Հի-

մա այդ խնդիրները հետևում են: Նորաբաց բաժանմունքը հագեցած է 30 հազար ելիո արժողությամբ գերմանական արտադրության սարքավորումներով, որոնք ըստ ամենայնի արհեստական երիկամներ են, մաքրում են արյունը եւ նորից մղում մարդու օրգանիզմ: Ինչպես «Այունյաց երկիր» փոխանցեց բաժանմունքի վարիչ Տաթևիկ Շեգունցը, ինքը վեց ամիս վերապատրաստվել է «Արաբիկո», մեկ ամիս «Մալաթիա» բժշկական կենտրոններում: Վերապատրաստում են անցել նաեւ կենտրոնի երկու բուժքույր եւ տեխնիկը: Իսկ մինչեւ օգոստոսի 15-ը տեղում մեթոդական եւ այլ կարգի օգնությամբ հանդես կգա

«Մալաթիա» բժշկական կենտրոնի մասնագետները: Բաժանմունքի բացմանը մասնակցում էին Այունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցը, մարզի բժշկական կենտրոնների տնօրեններ, հյուրեր: Շնորհավորանքի խոսքում Այունիքի մարզպետը նախ ընդգծեց այն հանգամանքը, որ մարզի բժշկական կենտրոնները թե հիմնամտորոգման, թե բուժարքավորումներով հագեցված լինելու տեսակետից բարվոք վիճակում են: Նշեց, որ օգոստոսին ավարտվելու է Մեղրու բժշկական կենտրոնի շինարարությունը, հոկտեմբերին իր դռները կբացի Կապանի հիմնադրոգված-վերակառուցված բժշկական կենտրոնը, Քաջարանի բժշկական կենտրոնն իր շենքային հարմարություններով եւ բուժարքավորումներով հագեցվածությամբ համապատասխանում է ժամանակակից պահանջներին: «Ձեզ մնում է միայն բարեխիղճ ծառայություն, հիվանդին ընդամենը մի բարեհամբույր վերաբերմունք է անհրա-

ծեշտ, – ասաց մարզպետը, – մարդն առանց այն էլ հոգեբանական վատ վիճակում է, երբ կորցրել է առողջությունը: Երբ բժիշկը մի քաղցր խոսք է ասում, բարի վերաբերմունք է դրսևորում, հիվանդը դրանով էլ է ապաքինվում: Տասը տարի է կրկնում եմ միտքը, թե այնպես պիտի անենք, որ մեր հիվանդը մայրաքաղաք չհասնի, եւ հիմա ասես թե դա մեզ հաջողվում է: Մեր բժշկական կենտրոնները շենքային բարվոք հարմարություններ ունեն, բուժարքավորումներով հիմնականում ապահովված են, այն, ինչ չունենք, ժամանակի ընթացքում ձեռք կբերենք: Ամեն ինչ պիտի արվի, որ հիվանդի հավատը բժշկի հանդեպ վերականգնվի: Մանավանդ մարդի աշխարհագրական դիրքն է «ստիպում», որ առողջությունը կորցրած մարդն անպատճառ իր ապրած վայրում բուժսպասարկում ստանա»:

Ժամանակում օգնություն է ստանում տասը հիվանդ՝ ինը Գորիսից, մեկը՝ Սիսիանից: Բուժսպասարկումը հեմոդիալիզի բաժանմունքն իրականացնում է պետպատվերի շրջանակում: Արմիդա Ղուկասյանը երիկամային քրոնիկ անբավարարությամբ հիվանդ է հինգ տարի: Մինչ այդ չորս տարուց ավելի բուժվել է «Մալաթիա» բժշկական կենտրոնում, վերջին ժամանակներս շաբաթական երեք անգամ ստիպված էր հասնել Կապան իր աշխատավարձի հիմնական մասը ծախսելով ճանապարհներին: Ասում է, որ իր համար դժվար էր 70 կմ ճանապարհ կտրել: Ուրախ է, որ այսուհետեւ անհրաժեշտ օգնություն է ստանալու իր բնակավայրում: Գորիսի բժշկական կենտրոնի փոխտնօրեն Լեւոն Հարությունյանն էլ տեղեկացրեց, որ այն հիվանդները, ովքեր բուժվում են Երեւանում, կարող են վերադառնալ եւ բուժումը շարունակել Գորիսի բժշկական կենտրոնում: **ՎԱՐՍՏ ՕՐԵՆՅԱՆ**



# Ամփոփվեց փարվա առաջին կիսամյակը

## Սարգսնրհրդում

Հուլիսի 10-ին Այունիքի մարզպետարանում տեղի ունեցավ մարզխորհրդի հերթական նիստը, որի ընթացքում ամփոփվեցին հուլիսի 1-ի դրությամբ մարզում կատարված տարբեր ոլորտների մի շարք աշխատանքներ:

Ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հարություն Հովհաննիսյանը ներկայացրեց զեկուցում 2015թ. հուլիսի 1-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքման վերաբերյալ: Նա նշեց, որ մարզի համայնքների 2015թ. բյուջեներով նախատեսվել է 4.350.484.1 հազար դրամ եկամուտներ, այդ բոլորն սեփական եկամուտների 1.474.111.7 հազար դրամ: Սեփական եկամուտների վեց ամսվա համար նախատեսված 592.151.1 հազար դրամի դիմաց փաստացի հուլիսի 1-ի դրությամբ հավաքվել է 641.696.2 հազար դրամ կամ նախատեսվածի 108.4%-ը: 2014թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ հավաքման աճը կազմել է 23% կամ 119.963.3 հազար դրամ:

Վարչության պետն ըստ առանձին եկամտատեսակների ներկայացրեց մարզի ընդհանուր պատկերը՝ մեկ անգամ մեծելով այն համայնքների ամուլները, որոնք թերառում են որոշ տուրքերի, վճարների ու հարկերի հավաքման գործընթացում: Ընդհանուր առմամբ մարզի միջին ցուցանիշը բավականին բարձր է, ինչը հաստատեց նաեւ ՏԿՄԻՆ տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը: Գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության պետ Սամվել Թամոյանը մանրամասն խոսեց աշխատանքների մասին, գարնանացանի մասին, ներկայացրեց տեղեկանք գյուղատնտեսական աշխատանքների համար 2014-15թթ. նախատեսված եւ հողօգտագործողներին փաստացի բաշխված դիզելային, ազոտական, ֆոսֆորական եւ կալիումական պարարտանյութերի ու սերմացուների վերաբերյալ: Ս.Թամոյանի հավաստմամբ՝ սկսվել են բերքահավաքի աշխատանքները, սակայն երաշտը կացահատիկի բերքատվության վրա բացասական ազդեցություն է թողնում: Քանի որ հավանական է, որ սերմացուի պակաս կլինի, մարզպետը խոստացավ ֆինանսավորել ՈՂ-ից մեր մարզի բնակլիմայական

պայմաններին համապատասխան լավագույն սերմացու ձեռք բերելը: Վարչության պետը նշեց, որ 2015թ. մարզում ավելացել է ամսաունների գլխաքանակը: Առողջապահության եւ սոցիալական վարչության պետ Նուրե Գեւորգյանն իր զեկուցման մեջ մանրամասն ներկայացրեց մարզի նախադարձային ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի եւ կանոնների պահպանման վիճակի եւ խնդիրների մասին: Նա մասնավորապես նշեց, որ առողջապահության նախարարության համապատասխան վարչության կողմից 2014թ.-ից իրականացվել են լայնածավալ ուսումնասիրություններ, որոնց արդյունքում հայտնաբերված շատ թերություններ բնորոշ են հանրապետության գրեթե բոլոր ՆՈՒՅ-երին: Վերջնական եզրակացությունն այն էր, որ պատասխանատու մարմինների կողմից ժամանակին պատշաճ հսկողություն չի եղել: Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը ներկայացրեց մարզում իրականացված բազմաթվաճյուղյա միջոցառումների՝ պատշաճ մակարդակով անցկացումը, ինչպես նաեւ հանրապետական առարկայական օլիմպիադաներում մեր մարզի ձեռքբերումները: Վարչության պետը նշեց նաեւ, որ գերացանցության մեղալի ներկայացված 22 շրջանավարտից 21-ը կարողացել է պաշտպանել իր հավակնությունը: Բացի կրթական ոլորտից՝ մար-

զի մշակույթի եւ սպորտի ոլորտում նույնպես կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են եղել մարզի մշակութային եւ մարզական դերի բարձրացմանը: Հ.Ալեքսանյանը խոսեց նաեւ աշակերտների հանգստի կազմակերպման մասին: Հալիծորի գյուղապետ Մարտ Գեղասիմյանը ներկայացրեց այն բոլոր աշխատանքները, որոնք իրականացվել են համայնքում առանձնացնելով զգալի ֆինանսական, ոռոգման քրի ու ներհամայնքային ճանապարհների բարեկարգման հիմնախնդիրները: Նա նշեց, որ սեփական եկամուտների հավաքման հարցը վերջին 2 տարում, կարծեք, դրական տեղաշարժ է գրանցում. տարվա սկզբին հանդիպելով յուրաքանչյուր հողօգտագործողի հետ՝ փոխադարձ համաձայնության են գալիս եւ կազմում ժամանակացույց, ըստ որի վճարումը կատարվում է: Եղվարդի գյուղապետ Սպարտակ Ջաբարյանը տեղեկացրեց կատարված եւ կատարվող աշխատանքների մասին՝ նշելով, որ հացահատիկի բերքահավաքը նախորդ մի քանի տարիների արդյունքները գերազանցել է: Խմելու եւ ոռոգման քրի խնդիրը շարունակում է համայնքում գերակա մնալ, թեպետ հնարավորության սահմաններում կատարվել են որոշակի աշխատանքներ, իսկ նախակրթարանի հիմնման աշխատանքներն ընթացքի մեջ են: Աժ պատգամավոր Արմեն Կարապետյանը նշեց, որ ոգեւորությամբ

է լսում մարզում իրականացվող աշխատանքների եւ ունեցած ձեռքբերումների մասին: Նա խոսեց նաեւ պոչուկների մշակման կառուցվելիք գործարանի մասին, որտեղ, նախնական տվյալներով, 330մլն դոլարի ներդրում կկատարվի, մարզը կապահովվի 1000 մշտական եւ 500 սեզոնային աշխատատեղով: Այունիքի մարզի փրկարար ծառայության վարչության պետ, փոխգնդապետ Բագրատ Ջաբարյանը զգուշացրեց համայնքապետներին ավելի զգոն լինել հատկապես տարվա այս իրդեհավտանգ եղանակին: Նա նշեց, որ այս տարվա կիսամյակային տվյալներից ելնելով՝ հողեկների քանակը քիչ է եղել, բայց ընդգրկած տարածքները՝ մեծ: Այունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, ամփոփելով նիստը, եւս մեկ անգամ հորդորեց համայնքապետներին սեփական եկամուտների հավաքումը լիարժեք կատարել: Ինչ վերաբերում է մարզի մանկապարտեզներում արձանագրված թերություններին, մարզպետը համայնքապետներին հանձնարարեց անհապաղ վերացնել մշակված թերությունները: «Համայնքային հրատապ խնդիրների լուծման նպատակով հատկացված գումարից պատրաստ ենք ներդրում անել, միայն թե կարգավորվեն այդ հարցերը», – նշեց մարզպետը: Մարզպետի տեղեկացմամբ՝ մարզի 15 դպրոցում կիրականացվեն շինարարական աշխատանքներ: **ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ**

# ՍՎԵՏԼԱՆԱ ԻՍԱԽԱՆՅԱՆ. «Հիմնական նպատակս մեր ունեցած կադրերին արժանի փոխարինողներ գտնելն է»

Էջ 1 — **Տիկին Իսախանյան, 2015թ. հունիսի 9-ից «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն եք նշանակվել: Ի՞նչ ժառանգություն ստացաք:**

– 2014թ. հոկտեմբերի 9-ից նշանակվել էի «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի պաշտոնակատար, իսկ 2015թ. հունիսի 9-ից տնօրեն: Եթե հակիրճ ասեմ, լավ ժառանգություն եմ ստացել, այստեղ աշխատում եմ բարձր կատեգորիայի հմուտ եւ բարեխիղճ բուժաշխատողներ. սա ավանդույթներ ունեցող հիմնարկ է, որտեղ ստացել եմ իմ աշխատանքային մկրտությունը: Ինչ վերաբերում է շենքին եւ տեխնիկական հագեցվածությանը, այստեղ բարեկարգման, բարեփոխումների ու վերանորոգման լուրջ խնդիրներ կան:

– **Քաջարանի հիվանդանոցի հետ կապված մեծ աղմուկից հետո ստուգվել են տարածաշրջանի բոլոր հիվանդանոցները: Ինչպիսի՞ բացթողումներ արձանագրվեցին Սիսիանի բժշկական կենտրոնում:**

– Հիվանդանոցում ստուգումների ընթացքում անողորմելի թերություններ, մեծ բացթողումներ չեն արձանագրվել: Ընթացիկ հարցեր էին հիմնականում պայմանավորված թղթարարությամբ, որոնք արդեն շտկվել են: Հաստատության բուժաշխատողները երկու անգամ մանրամասն հետազոտվել են, եւ որել վարակ չի հայտնաբերվել: Ներհիվանդանոցային վարակի դեպքեր չեն գրանցվել: Հիվանդանոցի բացթողումներից էր նաեւ թթվածնի կենտրոնացված մատակարարման համակարգի բացակայությունը: Ներկայումս այդ հարցն արդեն լուծված է մեր հնարավորության սահմաններում: Ինչպես բոլոր հիվանդանոցներում, բժշկական թափոնների տեղափոխման խնդիր ունենք, որ առաջիկայում, կարծում եմ, կկարգավորվի:

– **Թվարկեք Սիսիանի հիվանդանոցի հիմնախնդիրները:**

– Եթե առաջնահերթության կարգով նշելու լինեմ, ապա կառանձնացնեմ երեք հիմնախնդիր՝ երիտասարդ կադրերով համալրում, շենքի հիմնանորոգում եւ տեխնիկապես վերագիմուն, եղած մասնագետների որակավորման բարձրացում: Բարեբախտաբար, մեր հիվանդանոցի հատկապես երիտասարդ կադրերը ձգտում ունեն իրենց որակավորումը բարձրացնել: Հունիս ամսին մեր անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ Լիլյա Թադեոսյանը վերապատրաստվել է Մոսկվայում, իսկ սոնոգրաֆիստ Անուշ Դովլաթյանը՝ Երեւանում:

– **Ինչպիսի՞ն է պատկերը բժշկական կադրերի հարցում:**

– Սիսիանի հիվանդանոցում ունի 171 աշխատող, որից 33-ը բժիշկ, ընդ որում հիմն հոգի՝ բժշկական գիտությունների թեկնածու: Ինչպես շատ մարդերում, մեզ մոտ նույնպես խնդիր է երիտասարդ կադրերով համալրումը: Հիմնական նպատակս մեր ունեցած կադրերին արժանի փոխարինողներ գտնելն է: Հիվանդանոցի բժշկական ներուժը լավ է եւ շարունակում է համալրվել անհրաժեշտ մասնագետներով՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ (բժշկական գիտությունների թեկնածու), երիտասարդ եւ հմուտ երկրորդ նեոնատոլոգ: Մանկաբարձա-

գիներկոլոգիական բաժանմունքը ղեկավարում է մարզի գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ Սուրեն Վարդանյանը: Ընդհանուր թերապեւտիկ ծառայության բաժանմունքի վարիչն է սիրված եւ փորձառու բժիշկ Լյուբա Թամրազովան, (խմբ. արտաբանական ծառայությունը համակարգում է մարզում համբավ ունեցող արտաբան, բժշկական գիտությունների թեկնածու Սվետլանա Իսախանյանը), վիրաբուժական բոլոր կարգի վիրահատությունները կատարում է բժշկական գիտությունների թեկնածու Գագիկ Փիրուզյանը: Պետք է նշեմ, որ հիվանդանոցում մանկաբարձ-գինեկոլոգների պակաս կա: Նպատակ ունեմ մանկաբարձ-գինեկոլոգների մասնագիտական հերթապահություն սահմանել, քանի որ սա այն բնագավառն է, որտեղ այն անհրաժեշտ է: Դիմել եմ Պաշտպանության նախարարության բուժվարչություն, որպեսզի թույլատրվի մեր տարածաշրջանում գործող գինվորական հոսպիտալի գինեկոլոգին համատեղության կարգով հերթապահել նաեւ մեզ մոտ: Ֆունկցիոնալ դիագնոստիկայով զբաղվող բժիշկների համալրման կարիք ունենք:

– **Ավանդույթ է դարձել, որ մշտապես հետաքրքրվում են բժիշկներով, իսկ ի՞նչ կասեք միջին բուժաշխատողների մասին, որոնց գիտելիքները եւ պատրաստվածությունը պակաս կարեւոր չեն:**

– Այդ առումով կարող եմ ասել, որ լուրջ կարդային խնդիր չունենք: Ուրախակի է, որ շատ լավ պատրաստված երիտասարդ բուժօրույրեր ունենք: Նպատակ ունեմ անհետաձգելի եւ վերակենդանացման բուժօգնություն ցուցաբերելու համար շուրջօրյա հերթապահության միջին բուժաշխատողների առանձին խումբ ձեւավորել:

– **Ի՞նչ հաճախականությամբ են բուժաշխատողները վերապատրաստվում:**

– Վերապատրաստման համար պետությունը որոշակի աշխատանքներ է կատարում, բայց հիմնականում բուժաշխատողները վերապատրաստվում են սեփական միջոցների հաշվին: Բժիշկներ ունենք, որ այս պահին վերապատրաստման կուրսեր են անցնում, միջին բուժաշխատողների համար նախատեսել ենք վերապատրաստման կազմակերպել: Տեղում նույնպես կանցկացվեն վերապատրաստման դասընթացներ:

– **Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս կարելի է կարգավորել երիտասարդ կադրերով համալրման հարցը:**

– Ներկայումս յուրաքանչյուր բժիշկ ազատ կարող է ընտրել իր աշխատանքի վայրը, մասնագիտական հմտություններ ձեռք բերելու համար մեկնել արտասահման: Նախկինում նման ազատություն չկար: Կարծում եմ պիտի որոշակի, միգրացիոն օրենքով ամրագրված մեխանիզմ մշակել մարզերի հիվանդանոցները երիտասարդ կադրերով համալրելու համար: Առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը խիստ հետեւողական է մեր բնագավառի յուրաքանչյուր հարցի լուծման գործում, կարծում եմ, այս հարցը նույնպես վաղ թե ուշ լուծում կստանա:

– **Կարծեք, մեզանում մի երեւույթ է սկսել արմատավորվել, այսօր մարզերից հաճախ են հղիները մեկնում մայրաքաղաք թե՛**

**հետազոտվելու, թե՛ ծննդաբերելու համար: Ինչո՞վ է դա պայմանավորված՝ միգրացիոն անվտանգությամբ տեղական կադրերի հանդեպ, միգրացիոն անհրաժեշտ սարքավորումների պակասով կամ հիվանդի վիճակից էլնելու անհրաժեշտությամբ:**

– Ես ինձ իրավունք չեմ վերապահում խոսել ուրիշ հիվանդանոցների մասին, միայն կարող եմ ասել, որ մեր հիվանդանոցի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը 1-ին մակարդակի է, որ նշանակում է՝ սահմանված կարգով հղիության ընթացքում ունեցած լուրջ պարտզիաների դեպքում մենք պարտավոր ենք հիվանդին ուղարկել ավելի բարձր մակարդակի հիվանդանոց: Իսկ մակարդակները որոշվում են մանկաբարձ-գինեկոլոգների թվով, մասնագիտական մակարդակով, տեխնիկական վերագիմունք եւ այլն: Կեսարյան հատմամբ ծննդաբերությունների թիվը մեզ մոտ ցածր չէ: Շատ դեպքերում իրավունք չունենք տեղում վիրահատություն անել, բայց հիվանդը չի ցանկանում մեկնել մայրաքաղաք՝ վստահելով մեզ: Այս վերջին մի քանի տարիներին հիմնականում ծննդաբերում են

*|| Ես ինձ իրավունք չեմ վերապահում խոսել ուրիշ հիվանդանոցների մասին, միայն կարող եմ ասել, որ մեր հիվանդանոցի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը 1-ին մակարդակի է, որ նշանակում է՝ սահմանված կարգով հղիության ընթացքում ունեցած լուրջ պարտզիաների դեպքում մենք պարտավոր ենք հիվանդին ուղարկել ավելի բարձր մակարդակի հիվանդանոց...*

պատերազմի տարիներին՝ 1990-95թթ. ծնված կանայք, ովքեր ավելի շատ սթրեսներ են տարել (խմբ.՝ Ներ այնպիսիք պահին հիվանդանոցում վեց նորածին կար. բաժանմունքի վարիչ Սուրեն Վարդանյանի հավաստմամբ՝ հղիության արիեստական ընդհատման թիվը պակաս է, մյուս կողմից էլ ավելացել են պարթլոգիաները: Չեն գերակշռում նաեւ երրորդ երեխայի ծնունդները):

– **Եթե ամփոփենք 2015թ. առաջին կիսամյակը, ծնելիության եւ մահացության մակարդակը բարձրացել է:**

– 2013թ.-ի համեմատ 2014թ. նորածինների թիվն ավելացել էր. մեր հիվանդանոցում լսվել է 319 նորածին ծնի: 2015թ. առաջին կիսամյակում գրանցվել է 136 ծնունդ, ծնվել է 137 նորածին, որից աղջիկ՝ 64, տղա՝ 73 եւ երրորդ ու ավելի՝ թվով 30: Մեր բժշկական կենտրոնում վերջին 3 տարում գրանցվել են 2013թ.՝ 6 հիվանդանոցային եւ 134 ամբուլատոր մահ, 2014թ.՝ 9 հիվանդանոցային եւ 157 ամբուլատոր մահ, իսկ 2015թ. առաջին կիսամյակում՝ 2 հիվանդանոցային եւ 67 ամբուլատոր մահ:

– **Եթե կա նման վիճակագրություն, կարո՞ղ եք նշել մահացության առավել շատ պատճառ հանդիսացող հիվանդությունները:**

– Ըստ վիճակագրության մեր տարածաշրջանում հիմնականում մահացության պատճառ են սրտանոթային եւ ուռուցքային հիվանդությունները: Ցավալիորեն պիտի արձանագրեմ, որ հատկապես երիտասարդների շրջանում են գերակշռում ուռուցքային հիվանդությունները:

– **2015թ. մեկնարկել է սրտի անհետաձգելի վիրահատության ծրագիրը: Սիսիանից քանի՞ հի-**

**վանդ է ծրագրի շրջանակներում արդեն բուժօգնություն ստացել:**

– «Կյանքի ստեղծ» ծրագիրը մեծ ձեռքբերում է բոլորիս համար: Նպատակն է սուր ինֆարկտի ծանր դեպքերում բժշկական համապատասխան ցուցումների առկայության դեպքում կյանքեր փրկել ոչ դեղապատ մեկ ստեղծ տեղադրելով: Հստակեցվել է, թե բժշկական որ ցուցումների է էլեկտրասրտագրության ինչպիսի շեղումների դեպքում է անհրաժեշտ կոնսերվատիվ բուժում իրականացնել եւ որ դեպքերում հիվանդին ամենակարճ ժամանակում տեղափոխել տեխնոլոգիաներով ու մասնագետներով անհրաժեշտ հագեցվածություն ունեցող կլինիկա: Սիսիանից 13 հոգի արդեն օգտվել է այս ծրագրից: Տեղում ախտորոշելով պետության կողմից սահմանված հիվանդություններից մեկը (օրինակ՝ սուր ինֆարկտ) հիվանդին ուղարկում ենք կամ Գորիսի Հայ-ֆրանսիական արտաբանական կենտրոն, կամ Երբեմն էլ հիվանդի պահանջով՝ մայրաքաղաքի համապատասխան հիվանդանոց:

– **Լուրեր էին շրջանառվում այն մասին, որ Աղիտուի գինվորական հոսպիտալը եւ Սիսիանի հիվանդանոցը պիտի միավորեն: Որքանո՞վ են հավաստի այդ խոսակցությունները, եւ կարո՞ղ ենք ասել, որ մրցակցային դաշտ է ստեղծվել:**

– Ձիմվորական հոսպիտալի հետ մշտապես համագործակցում ենք, իսկ միավորման մասին պաշտոնական տեղեկատվություն չունեն: Հատկապես բժշկության բնագավառում առողջ մրցակցությունը գովելի

որտեղ հղիներն իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները կարող են ստանալ համապատասխան մասնագետներից: ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ հիվանդանոցում ստեղծվել է նաեւ ծնողական կրթության կենտրոն, որտեղ նախօրոք կազմված գրաֆիկով դասընթացներ են անցկացվում երիտասարդ ծնողների հետ երեխային առողջ մեծացնելու, ինչպես նաեւ հիվանդ երեխայի խնամքի վերաբերյալ:

– **Ընտանեկան բժիշկների ինստիտուտը կայացման ո՞ր փուլում է: Այն ի՞նչ առավելություններ եւ թերություններ ունի:**

– Ամենազվախվոր առավելությունն այն է, որ բժիշկը պետք է ավելի լավ ճանաչի իր հիվանդին, կարողանա ուղղորդել նրան համապատասխան մասնագետի մոտ: Թերություններից ամենամեծը թղթարարությունն է:

– **Այսօր հաճախ ենք քաղաքացիներից դժգոհություն լսում շտապօգնության ծառայության հետ կապված: Տարածաշրջանին սպասարկում է ընդամենը մեկ շտապ օգնության բրիգադ:**

– Սիսիանի հիվանդանոցը սպասարկում է բացի Սիսիան քաղաքից եւս 13 գյուղական համայնք: Շտապ օգնության չորս բրիգադ ունենք, օրական հերթապահում է մեկը: Կարծում եմ, դժգոհելու մեծ շարժառիթ չկա, քանի որ փորձը ցույց է տալիս, որ մեկ բրիգադը հիմնականում հասցնում է սպասարկել: Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում կանչում ենք նաեւ մեկ այլ բրիգադ: Այլ հարց է, որ շտապօգնության մեքենաները հին են, եւ կարիք կա նորերով համալրելու: Սիսիանի տարածաշրջանի մյուս գյուղական համայնքների բնակիչների անհետաձգելի բուժօգնություն իրականացվում է համապատասխան առողջության առաջնային պահպանման կենտրոնների միջոցով, բայց քիչ չեն նաեւ մեր կողմից սպասարկված դեպքերը:

– **Եթե չենք սխալվում, ոչ վարակիչ որոշ հիվանդությունների նախնական հայտնաբերման համար պետպատվերի շրջանակներում ստուգումներ են իրականացվում:**

– Պետպատվերի շրջանակներում երեք մեծ կանխարգելիչ ծրագրի է իրականացվում արգանդի վզիկի քաղցկեղի, շաքարային դիաբետի եւ սրտանոթային հիվանդություններից զարկերակային գերճնշման վաղ հայտնաբերման ուղղությամբ: Ինչպես գիտենք, մեր համարակրթությունում ընդունված չէ ժամանակակից բժշկի գնալ, հայտնաբերել հիվանդությունը վաղ շրջանում: Հաշվի առնելով հանրապետությունում առավել շատ տարածված հիվանդությունների վիճակագրական տվյալները՝ պետությունն ընդգրկել է հատկապես այդ հիվանդությունները: Կոչ են անում քաղաքացիներին օգտվել այս հնարավորությունից եւ հիվանդության վաղ շրջանում հայտնաբերել եւ համապատասխան բուժում ստանալ: Ի դեպ, ծրագրերը ֆինանսավորում է Հանաշխարհային բանկը:

– **Որպես ամփոփում ի՞նչ կասեք Ձեր աշխատակիցներին, քաղաքացիներին:**

– Նախեսառաջ, մեր հիվանդանոցում պետք է լիարժեք կայանա թիմային աշխատանքը, որպեսզի յուրաքանչյուր տարվա բուժաշխատողին նվիրված տոնը նշանավորվի ձեռքբերումներով: Նույն բնագավառի բժիշկները հիվանդին սպասարկելիս պետք է համագործակցեն միմյանց հետ, ընդհանուր հայտարարից քաղ բուժման կուրսն անցկացնելիս: Հիվանդներին մաղթում են առողջություն, սիսիանցիներից վստահություն մեր բուժաստատության հանդեպ:



# Փառապրոնը դառնում է ավանդական

Հունիսի 4-ին Գորիսում անցկացվեց «Այունիքի բարիքներ (թութ)» փառատոնը՝ «Արեւի փառատոն» հիմնադրամի աջակցությամբ և Գորիսի քաղաքապետարանի նախաձեռնությամբ: Մասնակցում էին մարզկենտրոն Կապան, Քաջարան, Մեղրի, Ագարակ, Սիսիան քաղաքները, Գորիսի տարածաշրջանի խնամարարները, Ներքին խնամարարները, Վերին Սիսիանի տարածաշրջանի Բռնակոթ համայնքները իրենց տաղավարներով: Փառատոնի ծրագրով պիտի մասնակցեն Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունը ճանաչելու, բայց նրան հատկացված տաղավարը դատարկ էր, թափուր էր ևս մի

### քանի տաղավար:

Ինչեւէ, մասնակցում էին նաեւ անհատ ստեղծագործողներ: Մի րոմյան Միհրանն իր փայտափորագրական, քիչ այն կողմ Վարդիկ Պողոսյանը կավից պատրաստած խեցեգործական աշխատանքներն էր ներկայացնում: Մեղրու մշակույթի կենտրոնի աշխատակից Աննա Համբարձումյանը փոխանցում է, որ Մեղրին փառատոնին մասնակցում է իր քաղցրահամ մրգերով, զինիներով, մուրաբաներով: Կապան քաղաքի տաղավարում ցուցադրված էին տարածաշրջանի բարիքները, նաեւ «Ալադկոֆֆ» ֆիրմայի խմորեղենը: Իրադարձություններից առաջ ընկնելով ասեմը, որ վերջում կապանցիներն արժանացան «Ազգային խմորեղեն» մրցանակի:

«Սիսիանի ռեսուրս կենտրոնը» փառատոնին ներկայացրել էր հայկական զարդանախշերով կարպետներ: Կենտրոնում քսան կին աշխատում է գործարքային հիմունքներով, եւս քսան կին յուրացնում է կարպետ գործելու արվեստը: Սովորում են Մարաշի ասեղնագործությունը: «Մեր նպատակը ոչ միայն աշխատատեղեր ստեղծելն է, այլեւ ազգային-ավանդականը պահպանելը: Մարաշի ասեղնագործությունը սիրուքահայերն են բերել Հայաստան: Մենք սովորել ենք ստեղծագործել և ուսուցանում ենք ուրիշներին, որ հարատեւի այդ արվեստը», - ասում է «Սիսիանի ռեսուրս կենտրոն»-ի տնօրեն Սրբուհի Գրիգորյանը, - շուտով կարպետագործությանը զուգահեռ կսկսենք զբաղվել գորգագործությամբ, այդպիսով կամանք համար զբաղվածության հարց կլուծենք: Ներկումից, մանուհից, գործելուց մինչեւ դիզայնը մենք ենք անում»:

Աշխույժ մթնոլորտ էր Վերին համայնքի տաղավարի մոտ, որտեղ արդեն վերջացել էր: Եվ երբ մենք, որ այսուհետ հուլիսի առաջին շաբաթ օրը միշտ տոնվելու է թիֆլիսյան փառատոնը: Նա հղմբացս տեղեկացրեց, որ մի քանի ժամ առաջ է վերադարձել Բելառուսից Գորիսի քույր քաղաք Նեպիժից, որտեղ տոնվում էր այդ քաղաքի օրը: Նաեւ հայտնեց, որ բելառուս բարեկամները եւ հյուրերը համտեսել են Գորիսի թիֆլիսյան կարծիք հայտնել, որ շատ քիչ է զիջում մեծահամբավ հայկական կոնյակին:

տեղ այցելուները համտեսում էին համայնքի բարիքները: «Այսօր գյուղացին արտադրում է՝ ակնկալիք ունենալով, որ վաճառելու է իր արտադրանքը: Փառատոնը նպաստում է, որ մարդիկ էկոլոգիապես մաքուր սնունդ վայելեն, գյուղացին էլ իր արտադրանքի իրացման շուկա ձեռք բերի, - ասում է Վերին համայնքի ղեկավար Արարատ Օրոյանը եւ հավելում, - եթե գյուղացին իմանա, որ իր արտադրանքը վաճառվելու է, դրա ծավալները կրկնապատկելու, եռապատկելու, քառապատկելու է: Փառատոնի կազմակերպումը շնորհակալ գործ է: Առաջիկայում կազմակերպվող մեծ փառատոնների ավելի հարուստ տեսականիով պիտի մասնակցենք»:

Փառատոնի հյուրերը գորիսեցի Սեյրան Պետրոսյանի տնամերձում ականատես եղան թութ բախելուց մինչեւ օղու թորման գործընթացին եւ տեղում վայելեցին այդ ինքնատիպ խմիչքը: Այնուհետեւ Գորիսի կենտրոնական զբոսայգու մարզահրապարակում տեղի ունեցավ փառատոնի բացման արարողությունը: Փառատոնի հյուրերին, մասնակիցներին օրհնանքի եւ բարեմաղթանքի խոսքեր հղեցին Գորիսի հոգեւոր հովիվ տեր Ահարոն քահանա Մելքումյանը եւ Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցը: Համայնքի ղեկավարը ներկաներին հիշեցրեց, որ անդրանիկ փառատոնը տեղի էր ունեցել անցած տարի օգոստոսի 23-ին, երբ թութ արդեն վերջացել էր: Եվ այսուհետ, որ այսուհետ հուլիսի առաջին շաբաթ օրը միշտ տոնվելու է թիֆլիսյան փառատոնը: Նա հղմբացս տեղեկացրեց, որ մի քանի ժամ առաջ է վերադարձել Բելառուսից Գորիսի քույր քաղաք Նեպիժից, որտեղ տոնվում էր այդ քաղաքի օրը: Նաեւ հայտնեց, որ բելառուս բարեկամները եւ հյուրերը համտեսել են Գորիսի թիֆլիսյան կարծիք հայտնել, որ շատ քիչ է զիջում մեծահամբավ հայկական կոնյակին:

Մինչ փառատոնի մասնակիցները վայելում էին այունյաց բարիքները, ճեպագրույց ունեցանք փառատոնի մասնակից հյուրերի հետ:

### Գագիկ Գինոսյան

«Կարին» ավանդական պարի հանույթի գեղարվեստական ղեկավար, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ

Կարծում են՝ յուրաքանչյուր փառատոն պիտի խրախուսվի, առավել եւս այն փառատոնները, որոնք մայրաքաղաքից ավելի հեռու են տեղի ունենում, եւ առավել եւս ինձ համար հարազատ մարդեկան ենելում Սյունիքում: 1987 թվականից Գարեգին Նժդեհի գործերն են կարդում, ուսումնասիրում, եկել են Կապան, բարձրացել խուստուփ, եւ այն, ինչ վերապրել են խուստուփի գագաթին, անկարագրելի է: Իմ ինտերնետային կայքէջում երկու լուսանկարս կա. մեկը Արարատի, մյուսը՝ խուստուփի գագաթին: Ինձ համար Սյունիքը հայի լինելությունը վերահաստատած մի աշխարհ է, եւ պատահական չէ, որ Նժդեհն այստեղ է իր հերոսամարտը տվել: Վատահ են այնպիսի հերոսամարտ, որպիսին եղել է Սյունիքում, դժվար է պատկերացնել, եւ Արցախյան պատերազմն ընդամենը շարունակությունն է Սյունյաց հերոսամարտի: Վատահ են, որ այստեղ դեռ թեւածում է Նժդեհյան ոգին: Կարծում են, որ յուրաքանչյուր հայ մարդ պիտի սատարի մարզերի հզորացմանը, քանզի մեր երկրի սահմանները մարզերն են պահում: Երեւանում ազատ եւ ինքնավատահ ենք ապրում, բայց ասեմ, որ այդ ինքնավատահության ակունքն



Բացման խոսքով հանդես է գալիս Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցը



Կապանի տաղավարը ներկայացնում է քաղաքապետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնի աշխատակից Նարա Մելքումյանը



Միհրան Միրումյանի փայտափորագրական աշխատանքները

այստեղ է: Մենք պիտի արժեքն իմանանք մեր երկրի այն հատվածների, որ ամեն վայրկյան թշնամու ոտնձգությանը կարող է ենթարկվել: Յուրաքանչյուր հայ մարդ, ով պատասխանատվություն է զգում Հայաստանի ճակատագրի համար, պետք է ամուր կապվի հեռավոր մարզերի, առավել եւս Սյունյաց աշխարհի հետ:

**Կամո Արզումանյան**

Կապանի Ա.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն

Հյուրախաղերով Արցախում էինք, վերադարձի ճանապարհին հայտնվեցի այս փառատոնում: Հաջողությամբ անցան Կապանի պետ-թատրոնի հյուրախաղերը, բարեգործական ակցիա կատարեցինք Արցախի պաշտպանության բանակի զորամասերի համար, չէինք մոռացել նաև բանակի սպաների ընտանիքները, նրանց երեխաների համար բեմադրեցինք թուվալայնի հեքիաթները: Սա թատրոնի կուլտիվի երկրորդ այցն է Լեռնային Ղարաբաղ, որն իրականացվեց ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդակցական, գեներալ-լեյտենանտ Մուրադ Սարգսյանի նախաձեռնությամբ: Նաև հանդիպեցինք Արցախի բանակի նորանշանակ կրամանատար Լեւոն Մնացականյանի հետ, ով խրախուսեց Կապանի թատրոնի այցելությունը:

**Մեխակ Ապրեսյան**

ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի զբոսաշրջության վարչության պետ

Մենք մի շարք կարեւորագույն խնդիրներ ունենք լուծելու, որոնք պետական մարմինների, մասնավոր հատվածի, բնակչության լայն շերտերի շահերից է բխում: Դա այն է, որ պիտի զարգացնենք, ամրապնդենք մեր ավանդույթները, զբոսաշրջությունն ապակենտրոնացնենք դեպի հանրապետության մարզեր, նպաստենք տնտեսության համաչափ զարգացմանը, որ դրանք ավելի զրավիչ ու մրցունակ լինեն միջազ-



«Միսիանի կանանց ռեսուրս կենտրոնի» փողավարը



գային շուկայում: Այս փառատոնը թվարկածա բոլոր խնդիրներին առնչվում է, համախմբում է բոլորին, հնարավորություն է տալիս հյուրընկալող քաղաքի շրջակա համայնքներին ներկայացնել իրենց ներուժը, մասնավորապես որ կազմակերպվում է նման հրաշալի քաղաքում, նման հյուրընկալ ժողովրդի հետ, որտեղ կա ավանդույթ, պատմություն, մշակույթ: Մնում է եղածը շատ լավ մերկայացնել, ավանդույթը պահպանել: Տարիներ հետո կտեսնեք, որ այն մեծ նշանակություն ունեցող փառատոն կդառնա, ինչին մենք միահամուռ ուժերով պիտի հասնենք: Խնդիրը բնավ այն չէ, որ ուրախանանք այս օրը, այլ ողջ տարվա համար ներկայացնենք մեր հնարավորությունները, զբոսաշրջային ներուժը: Սա շատ կարեւոր է:

Փառատոնի երաժշտական-գեղարվեստական ծրագիրը եւս հազեցած էր, պարային ելույթներով հանդես եկավ հայկական ավանդական պարի «Կարին» համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Գագիկ Գինոսյան): Գորիսի գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի գուսանի անունը կրող ժողգործիքների անսամբլը (մեներգիչներ՝ Անուշ Ներսիսյան, Արթուր Դադայան, Սուսաննա Ղունաշյան, Մերի Նուրիջանյան, Մարուսյա Նուրիջանյան, խմբի ղեկավար՝ Սաշիկ Սարգսյան) փառատոնի մասնակիցներին ներկայացրին ժողովրդական երգերի ընտրանի: Ցուցադրական ելույթով հանդես եկավ լարախաղաց-անպարար Վլադիմիր Հակոբյանը: Փառատոնի փակումից առաջ տարբեր անվանակարգերով («Լավագույն ձեռավորված տաղավար», «Լավագույն ավանդական ուտեստ», «Լավագույն տարագ», «Լավագույն կերակրատեսակ», «Քեֆ անողին քեֆ չի պակսիլ», «Պստիկ, ճստիկ մասնակից», «Ամենահայկական տաղավար», «Լավագույն թթի օղի» եւ այլն) մրցանակներ հանձնվեցին: Ի դեպ, հաղթողներին հանձնվող պատվոգրերում նշված էր «Սյունյաց ավանդույթներ» փառատոն: Կարծում ենք, որ սա ակնարկ է այն մասին, որ փառատոնն ավանդական դառնալու արդեն լուրջ հայտ է ներկայացրել:



Մեղրու փողավարը ներկայացնում է մշակույթի կենտրոնի աշխատակից Աննա Համբարձումյանը

# Հանքարդյունաբերական ձեռնարկությունների արհմիությունների դերը պիտի վերանայել

էջ 1 **հավաստիացնում են, շատ դեպքերում բնավ կապ չունի մարդու ինտելեկտի հետ», –** նշեց հի-ի նախագահ Արթուր Ղազարյանը:

«Աշխատավորների իրավունքների պաշտպանության միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությանն անդամագրված աշխատավորները հնարավորություն ունեն հարցերի կամ խնդիրների դեպքում դիմել կազմակերպության իրավաբաններին խորհրդատվություն ստանալու եւ հետագա գործընթացները, ընդհուպ մինչեւ դատական ատյան հասնելը, իրականացնելու ակնկալիքով ու միայն անվճար հիմունքներով:

2014թ.-ից գործող հի-ն այս ընթացքում բավականաչափ հարցերի լուծում է կարողացել տալ՝ հանքարդյունաբերության աշխատավորի անվտանգության մակարդակի բարձրացման հարցերից մինչեւ աշխատանքային պայմանների բարելավում: «Հի-ի անդամի անունը գաղտնի եմք պահում, քանի որ վտանգ կա, որ մեզ դիմելու համար նրան կարող են ազատել աշխատանքից: Մենք դեռեւս չենք հասել այն մակարդակին, որ ընկերության ղեկավարությունը նորմալ համարի իր աշխատավորի սեփական շահերը պաշտպանելու համար այլընտրանքային կազմակերպության դիմելը», – նշեց հի նախագահը:

Ա.Ղազարյանի տեղեկացմամբ՝ 2015թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ կազմակերպությունը կունենա մոտավորապես 1000 անդամ, իսկ 2016թ. կունենա 300-400 անդամավճարով անդամ: Ի դեպ, ծրագրի նպատակներից է անդամավճար մուծելու գործընթացի կազմակերպումը, որ կլինի կամավոր հիմունքներով: «Իհարկե, կազմակերպությունը շարունակելու է անվճար գործունեությունը, իսկ այն մարդիկ, ովքեր կցանկանան ավելի ծավալուն խորհրդատվություն ստանալ, քան նախատեսվում է անվճարի դեպքում, չնչին անդամավճար ներդրելով, կստանան իրավական ծառայությունների մի փաթեթ, որի մեջ է մտնում խորհրդատվությունից մինչեւ դատական գործընթաց: Այդ հարաբերություններն ամրագրված են լինելու պայմանագրով: Ծառայությունները մատուցելու են կազմակերպության իրավաբանները եւ փաստաբաններն ըստ ծառայության տիպի», – տեղեկացրեց Ա.Ղազարյանը:

Կազմակերպության նախագահը նախելառաջ ձեռքբերում համարեց հի-ի ստեղծումը, այնուհետեւ այն փաստը, որ տարեցտարի ավելանում է անդամների թիվը, որ նշանակում է իրենց վստահում են: Սա հնարավորություն է տալիս ավելի լայն շրջանակներին իրազեկել իրենց իրավունքների մասին, լուծել նրանց հուզող հարցերը եւ, ամենակարեւորը, բարձրացնել աշխատավորների իրավագիտակցության մակարդակը:

Գիշտ է, հանքարդյունաբերական ձեռնարկություններում գործում են արհմիություններ, բայց դրանք հիմնականում զբաղվում են աշխատավորների տարբեր

աղիքներով նյութական օժանդակություն տրամադրելով եւ ոչ նրանց իրավունքների պաշտպանությամբ: Կազմակերպության նպատակներից է նաև նպաստել արհմիությունների մակարդակի առավել զարգացմանը՝ փոխադարձ հանդիպումների ընթացքում ներկայացնելով առաջավոր երկրներում գործող արհմիությունների դերակատարությունը: Իհարկե, դատարիների աշխատանքի արդյունք է, որ շատ հաճախ արյունալի բախումների հետեւանքով է կայացել:

«Մեզանում «արյունալի» բախումներ չեն արձանագրվում, փոխարենը, եթե կարելի է այդպես ասել, կոշտ-կոպիտ վերաբերմունքի են արժանանում այն այլընտրանքային կազմակերպությունները, որոնք փորձում են պաշտպանել աշխատավորների շահերն ավելի լավ, քան ներկայիս արհմիությունները», – հավելեց Ա.Ղազարյանը:

Կազմակերպությունն ունի վեց աշխատող՝ իրավաբաններ եւ փաստաբաններ, ֆինանսավորվում է ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակից՝ մինչեւ ծրագրի հեթոքական փուլի ավարտը, որ կլինի 2015թ. դեկտեմբերին:

Եթե փորձենք ամփոփել այս ամբողջ ժամանակահատվածի աշխատանքների արդյունքները, ապա կարճամազ գրեթե փաստը, որ մեկ աշխատավորի խնդիրը լուծելով բազում աշխատավորների հարցը նույնպես լուծում է ստանում: Գիշտ է, լինում են նաև միայն տվյալ անհատին վերաբերող հարցեր, բայց դրանք չեն գերակշռում: Երբեմն պատահում է, որ աշխատավորի բարձրացրած խնդիրը չհիմնավորված է լինում, եւ, բնական է, ընթացք չի ստանում:

Հարցն ուսումնասիրելուց հետո դիմում են ձեռնարկության ղեկավարությանը, փորձում լուծում գտնել, իսկ եթե ցանկալի արդյունք չեն ստանում, հասնում են մինչեւ դատարան:

«Հանքարդյունաբերության աշխատավորների նորաստեղծ միության կարողությունների բարձրացում» ծրագրի շրջանակներում մշակվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, եւ մինչեւ ծրագրի ավարտը կիրականացվի օրենսդրական փոփոխությունների գործընթաց:

Աշխատավորների շահերից ելնելով՝ շահառու տարածքներում նախատեսվում է կազմակերպել հանրային քննարկումներ, որոնց ավարտից հետո օրենսդրական փոփոխությունների փաթեթը կքննարկվի փորձագետների հետ, եւ կկազմվեն եզրակացություններ ու առաջարկություններ: Այնուհետեւ նախատեսվում է օրենսդրական փոփոխությունների առաջարկը ներկայացնել համապատասխան պետական մարմինների ուսումնասիրության, որից հետո՝ ՀՀ ազգային ժողովի քննարկման:

Ի դեպ, ծրագրի շարունակականության դեպքում, բացի հանքարդյունաբերությունից, գործունեությունում կընդգրկվեն նաև այլ ոլորտի աշխատավորները:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Կաթի գնի փափանտումներ. հիմնավորված են, թե՛ ոչ



## Վերանշակող արդյունաբերություն

Վյուրացու կաթ արտադրողի դժգոհությունը: Ընկերության տնօրենը՝ մասնագիտությամբ կաթի եւ կաթնամթերքի ինժեներ-տեխնոլոգ Զուհիկ Ստեփանյանը իր մեկնաբանությունն ունի. «Ցածր գինը միայն Սյունիքում չէ: Մրցակցային մթնոլորտը գլոբալ հարց է: Հուլիան է գին թելադրում: Դա, թերեւս, կապված է ռուսական ռուբլու փոխարժեքի անկման հետ, էժան կաթի փոշի է ներկրվել Զայաստան, դրա հաշվին թերեւս կաթի գինը կարող էր իջնել: Կաթի փոշիով պատրաստված արտադրանքը տնտեսվարողի վրա 80-100 դրամ է «նստում»: Անցյալ տարի մենք կաթը գնել ենք 160 դրամով, 150 դրամից պակաս կաթ չենք մթերել: Կաթի գնի անկման դինամիկա մարտի 15-ից է արձանագրվել: Մայիսին 130-140 դրամով ենք մթերել, հունիսի 1-ից 120 դրամով, 15-ից դարձել է ներկայիս գինը՝ 110 դրամ: Ինչպես տեսնում եք, երաշտ է, անասնակերը պակասելու է, ուզած-չուզած կաթի գինը պիտի բարձրանա»:

Ձանգահարեցինք նաեւ Սիփանի տարածաշրջանում գործող կաթնամթերքների արտադրության «Բորիսովկա» ՍՊ ընկերություն, որտեղից հայտնեցին, որ իրենք կաթը

պիտի լինի, չէ՞, որ ամռանը ստացված կաթը ծնունդը վերանշակեն: Ճիշտ է, կաթի փոշին կենսաբանորեն գիշտ է բնական կաթին, բայց այն արդարացված է օգտագործել արտադրության մեջ: Այլ բան է, երբ կաթի փոշուն անհայտ ծագումով բուսական յուղեր, նույնիսկ սոյա են խառնում»:

«Սիս ալպ» ընկերությունում ուր մարդ է աշխատում: «Մեր արտադրությունը դեռ լիարժեք տեսք չի ընդունել», - կռահում է լրագրողի հաջորդ հարցը: - Անհատական տունը վերակառուցել, վերածել ենք արտադրամասի: Կաթնամթերքն արտադրում ենք ժամանակակից տեխնոլոգիաներով»:

Երբ նյութը պատրաստվում էր տպագրության, շահագործման էր հանձնվում լիարժեք կաթնամթերքի արտադրության վերակառուցված արտադրամասը:

«Եթե հիշում եք, - շարունակում է Զ.Ստեփանյանը, - մի քանի տարի առաջ Սիսիանի մանկապարտեզում խնդիր էր ծագել, մանկապարտեզի սաները հոսպիտալացվել էին, նաեւ մեր ընկերության կաթնամթերքն էին ստուգել, ինչ ցուցիչներն էլ համապատասխանել էին նորմային: Այլ ֆիրմաների արտադրանքի մեջ 3-4 ցուցիչների խախտումներ էին արձանագրել: Չարմացել էին, թե այդքան փոքրիկ արտադրությունն ինչպես է կարողանում վտանգից զերծ արտադրանք տալ»:

Փորձեցինք տեղեկանալ, թե մեր օրերում արտադրության կազմակերպիչ, ծեռնեղեցի համար ո՞րն է ամենամեղ օղակը, փոքր արտադրության մեջ ի՞նչ խնդիրներ են ծագում, եթե կաթնամթերք է արտադրում, ինչո՞վ է նեցուկ լինում գյուղնախարարությունը: Բայց մեր գրուցակիցը հարցերի պատասխանն այլ ուղղությամբ տարավ. «Այլ խնդիրներ են ինձ հուզում, ինչպես Զայաստանի բնակչության մեծամասնությանը: Հատ լավ կլինեք, որ մարդիկ աշխատատեղեր ունենային, իշխանությունները խրախուսեին աշխատատեղ ստեղծողներին, հայ մարդը չհեռանար իր հայրենիքից: Աշխատող բնակչություն լինելու է սպառող բնակչություն: Տնտեսությունը շարժվեր առաջ, թե չէ մենք ենք քարշ տալիս այս տնտեսությունը: Երբ նայում ես առաջ, ապագան մշուշոտ է թվում: Բայց էլի հույսով վերջում եմ, շինարարություն եմ անում, ասում եմ, ոչինչ, դժվարությունները կանցնեն-կզնան, վաղը լավ կլինի»:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

# ՀՀ ԱԱԾ քննչական վարչության հաղորդումը

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության վարույթ փոխանցված ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Սերգեյի խաչատրյանի եւ նրա հետ գտնված երկու անձանց նկատմամբ 2015թ. մայիսի 20-ին ժամը 18:15-ի սահմաններում սպանության փորձ կատարելու դեպքի հարուցված թիվ 69104115 քրեական գործով, վերը նշված սպանության փորձը կատարելու կասկածանքով, ՀՀ ԱԱԾ մարմինների կողմից որոնվում է՝ մոտ 55 տարեկան, 175 սմ հասակով, օվալաձև դեմքով, ալեխառն խիտ մազերով, ամրակազմ մարմնով, ուղիղ քթով, համաչափ դիմագծերով, դեմքին առանց հատուկ նշանների տղամարդ, որի արտաքին նկարագրությամբ կազմված դիմանկարը տեղադրված է ՀՀ ԱԱԾ պաշտոնական կայքէջում /www.sns.am/, ինչպես նաեւ պարբերաբար ցուցադրվել է հեռուստատեսությամբ:

Նկարագրված անձին ճանաչողներին խնդրում ենք անհապաղ զանգահարել ՀՀ ԱԱԾ 011 52-95-56, 011 58-90-96 եւ ՀՀ Ոստիկանության 1-02 հեռախոսահամարներով կամ հայտնել ՀՀ Ոստիկանության մոտակա բաժին:

Տեղեկատվություն տրամադրած անձի գաղտնիությունը երաշխավորվում է:

02.07.2015

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ խաչատրյանի եւ նրա ուղեկիցների նկատմամբ 2015թ. մայիսի 20-ին ժամը 18:15-ի սահմաններում հրագնի գործադրմամբ սպանության փորձ կատարելու դեպքի առթիվ իրականացվող նախաքննության ընթացքում ՀՀ ԱԱԾ մարմինների կողմից ձեռնարկված օպերատիվ-քննչական գործողությունների արդյունքում, նշված հանցագործությանն առնչակից լինելու կասկածանքով, 03.07. 2015թ. ձերբակալվել են ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի բնակիչներ՝ Գարեկ Ռոմիկի Աթաջանյանը, Հենրիկ Շահենի Ավագյանը եւ Գորիս քաղաքի բնակիչներ՝ Վիտալի Վլադիմիրի Սիմոնյանը եւ Արա Եմիլի Բուդաղյանը:

Օրենքով սահմանված կարգով կատարված խուզարկությունների արդյունքում ձերբակալված անձանց պատկանող բնակարաններից, այլ շինություններից հայտնաբերվել է մեծ քանակությամբ զենք եւ ռազմամթերք, այդ թվում՝ «ԱԿ-74» տեսակի 5. 45 մմ տրամաչափի ինքնածիփ փամփուշտատու փերով եւ փամփուշտներով:

Ներկայումս իրականացվում են ձերբակալման համար հիմք հանդիսացած կասկածանքի հաստատմանը կամ հերքմանը, ինչպես նաեւ քրեական գործով պարզաբանման ենթակա այլ հանգամանքների ստուգմանն ուղղված տարաբնույթ քննչական եւ օպերատիվ գործողություններ: Դեպքի վայրում հայտնաբերված զենքերի ու պարկուճների եւ առգրավված զենքի նույնականությունը պարզելու համար նշանակվել են փորձաքննություններ:

Նախաքննության հետագա ընթացքի եւ միջանկյալ այլ արդյունքների մասին կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

03.07.2015

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ խաչատրյանի եւ նրա ուղեկիցների

մթերում են լիտրը 120 դրամով (անցած տարի այս նույն ժամանակաշրջանում մթերվող կաթի գինը 150 դրամ էր):

Տնօրեն Զուհիկ Ստեփանյանը նաեւ տեղեկացրեց, որ ամռանը կաթնամթերքի իրացման խնդիր ծագում է, կաթնամթերքի իրացումն ավելի հաջողությամբ աշնանը եւ ձմռանն է լինում: Այս ամռանը շուկայում կաթնամթերքի գնանկում է նկատվել, պատահել է շուկայում պանիրն առաջարկվել է կիրգորամը 1000-1100 դրամով (նախորդ տարում 1600-1700 դրամ էր): Հուլիան «Սիս ալպի» մածուցն էլ 460-ի փոխարեն վաճառվում է 400 դրամով:

Ինչպես տեսաք, տնօրենի խոսքի մեջ ակնարկ եղավ կաթի փոշու մասին: Մեր ունեցած տվյալներով տնտեսվարողների մի մասը կաթնամթերք ստանում է հենց կաթի փոշուց, շուկայում կաթնամթերքի գնագոյացման հարցում մեծ դեր ունի կաթի փոշին: Մեր գրուցակցից ցանկացանք տեղեկանալ, թե ինչ ասել է կաթի փոշի, որքանով է արդարացված դրա կիրառումն արտադրության մեջ: «Կաթի փոշու կամ չոր կաթի ստեղծումն անհրաժեշտություն է, քանի որ ամռանը, անասնակերի առատությամբ պայմանավորված, կաթի ավելցուկ է գոյանում, իսկ ձմռանը կաթը պակասում է, - մանրամասնեց Զուհիկ Ստեփանյանը, - մի միջոց

## համայնքների առաջին փուլում մրցանակային տեղեր զբաղեցրած 34 ընտանիք:

Մրցույթն սկսվեց Տեր Շիրակ քաղաքային օրհնությամբ: Մասնակիցներին ուղջունեցին եւ հաջողություն մաղթեցին Քաջարանի քաղաքապետ Վ. Գեւորգյանը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության վարչության մշակույթի եւ սպորտի բաժնի պետ Ս. Դավթյանը:

Մրցույթի գլխավոր մրցավարն էր Գ. Ստեփանյանը: Մասնակիցները մրցել են բասկետբոլի գնդակի նետում, խաղային փոխանցումավազք (30մ), խաղային փոխանցումավազք թենիսի գնդակներով, խաղային փոխանցումավազք (80մ), հրաձգություն, հավաքիր «ՀԱՂՄԱՆԱԿ» բառը մարզածներում:

Տարիքային չորս խմբերում մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցներին տրվեցին պատվոգրեր եւ դրամական պարգևներ:

29.06.2015 mtaes.am



# ՀՀ Նախագահի մրցանակի համար

Հունիսի 28-ին Քաջարան քաղաքային համայնքի նորակառույց մարզահամալիրում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի մարզային փուլը: Մրցույթին մասնակցում էր Կապան, Քաջարան, Սիսիան եւ Մեղրի քաղաքային

րի նկատմամբ 2015թ. մայիսի 20-ին ժամը 18:15-ի սահմաններում հրագնի գործադրմամբ սպանության փորձ կատարելու դեպքի կապակցությամբ հարուցված քրեական գործով ստացվել է փորձագետի եզրակացությունը, համաձայն որի՝ դեպքի վայրի գնությունը հայտնաբերված թվով 28 հատ պարկուճները կրակված են փորձաքննության ներկայացված «ԱԿ -74» տեսակի 5, 45 մմ տրամաչափի ինքնածիփ-զիգ, որն օրենքով սահմանված կարգով կատարված խուզարկությամբ հայտնաբերվել էր Հենրիկ Ավագյանի հաշվառման վայրի՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Սյունիք, Վերին թաղամաս, շենք 15, բն. 8 հասցեին կից շինությունում:

Քրեական գործով ձեռք բերված ապացույցների համակցության նախնական գնահատման արդյունքում նախաքննական մարմինը:

Հենրիկ Ավագյանին մեղադրանք է առաջարկել սպանության պատվերով, ապօրինաբար երկու եւ ավելի անձանց դիտավորությամբ կյանքից զրկելու փորձ կատարելու /ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 8-րդ կետեր/, ինչպես նաեւ ապօրինի կերպով զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու, կրելու եւ պահելու համար /ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մաս/,

Գարեկ Աթաջանյանին մեղադրանք է առաջարկել սպանության պատվերով ապօրինաբար երկու եւ ավելի անձանց դիտավորությամբ կյանքից զրկելու փորձին օժանդակելու /ՀՀ քրեական օրենսգրքի 38 -34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 8-րդ կետեր/, ինչպես նաեւ ապօրինի կերպով զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու եւ պահելու համար / ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մաս/,

Վիտալի Սիմոնյանին մեղադրանք է առաջարկել սպանության ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ պատվերով կյանքից զրկելու փորձին օժանդակելու / ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետ /, ինչպես նաեւ ապօրինի կերպով զենք եւ ռազմամթերք ձեռք բերելու եւ պահելու համար /ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մաս/,

Արա Բուդաղյանին մեղադրանք է առաջարկել սպանության ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ պատվերով կյանքից զրկելու փորձի դրոշմային համար /ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետ /:

Մեղադրյալներին կալանավորելու վերաբերյալ նախաքննության մարմնի միջնորդությունները դատարանի կողմից բավարարվել են:

Բոլոր մեղադրյալները պատշաճ հնարավորություն են ունեցել օգտվելու իրենց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ եւ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ու վերաբերելի այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն միջոցներից:

Նախաքննության ընթացքում ձեռնարկվում են ինչպես մեղադրյալների մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ բոլոր միջոցառումները:

06.07.2015

# Հրդեհների պատճառները հիմնականում մարդածին են

**Հունիսի 29-ին Կապանի Մինաս Պապյան փողոցի թիվ 20 շենքի հարակից սարավանջում խոտածակի հրդեհ էր բռնկվել: Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցել են տեղի հրշեջ-փրկարարները և «Հայաստան» ՊՈԱԿ-ի Կապանի անտառտնտեսության մասնաճյուղի աշխատակիցները:**



Այրվել է 12 հա բուսածածկ տարածք և ինքնաշեն փայտյա խորհրդանոց 15քմ:

«Հայաստան» ՊՈԱԿ-ի Կապանի անտառտնտեսության մասնաճյուղի տնօրեն Գարիկ Միրզոյանի փոխանցմամբ՝ ջերմաստիճանի կտրուկ բարձրացումը, որ դեռ առաջիկա օրերին կպահպանվի, հրդեհի հիմնական պատճառն է: Այդ իսկ պատճառով նա քաղաքացիներին կոչ արեց անտառում կամ խոտածակ տարածքներում պահպանել անվտանգության կանոնները՝ խնջույքից հետո կրակը մարել, ծխախոտի մնացորդները չնետել, քանի որ խոտն արդեն չորացել է, խոտհարքից հետո չվառեն մնացորդները, ինչպես նաև ոչուրավառ հեղուկով պատված լաթեր չնետեն:

Ինչպես հայտնի է, տարվա այս եղանակին հաճախակի կարող են բռնկվել հրդեհներ՝ պայմանավորված ավելի շատ մարդածին գործոններով: Գ.Միրզոյանի փոխանցմամբ՝ այս տարի անցյալ տարվա համեմատ պակասել է հրդեհների թիվը, իսկ Կապանի տարածաշրջանի անտառներում դեռևս հրդեհ չի բռնկվել: Եվ լրատվամիջոցներով, եւ տեղում անընդհատ բացատրա-

կան աշխատանքներ են տարվում բնակիչներին հորդորելով զգույշ լինել՝ աղետալի հետեւանքներից խուսափելու համար: «Անտառը պահպանելը մեր սուրբ պարտականությունն է», – նշեց մասնաճյուղի տնօրենը:

Ի դեպ, մասնաճյուղը գինված է հակահրդեհային անհրաժեշտ միջոցներով և պատրաստ է աջակցել հրշեջ-փրկարարներին:

Տնօրենը տեղեկացրեց նաև, որ արդեն սկսվել են անտառների շահագործման աշխատանքները, այսինքն՝ ծառերի հատատեղերի հատկացումը: Ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի համաձայն կատարվելու է հատում: 1խմ կանգուն ծառի արժեքն անփոփոխ է՝ 9720 դրամ: Անտառաները գյուղական համայն-

քի յուրաքանչյուր ընտանիքի, ինչպես նախորդ տարիներին, անվճար թույլ է տրվում անտառից Ցխմ վառելափայտ տանել, ավելի դեպքում սահմանված չափով գումար պիտի վճարեն: «Նախորդ տարվա համեմատ այս տարի ապօրինի ծառահատումների թիվը նվազել է: Թերևս մարդիկ գիտակցաբար են մոտենում այս հարցին: Նրանք գիտեն, որ ապօրինի ծառահատումների դեպքում տուգանքներ պիտի վճարեն և նախընտրում են ամեն ինչ օրենքի սահմաններում անել: Իհարկե, տուգանքի չափը մենք չենք սահմանում, մենք միայն արձանագրում ենք փաստը, իսկ համապատասխան տեսչությունը սահմանում է տուգանքը», – նշեց Գ.Միրզոյանը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Բուլոր փայլի մեղալներով

### Սարգական

Քաջարանի մանկապատանեկան մարզադպրոցը հիմնադրման տասնամյակը միջազգային հարթակում ձեռք բերած մրցանակներով է նշանավորում: Սարգադպրոցի գեղարվեստական մարմնամարզության չորս մարզուհի (Սառա Առաքելյան, Սյուզաննա Ալեքսանյան, Նարե Մարգարյան, Ելենա Սարգսյան, մարզիչներ Ինգա Փարսադանյան, Լիլիթ Աբգարյան) հունիսի 26-ից 29-ը Օադեթում իրենց հնարավորություններն են փորձել միջազգային մրցաշարում, որ «Հայաստանի ծաղիկներ» անվանումն էր կրում: Մասնակցում էին նաև Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Վրաստանի փոքրիկ մարզիկները: Սարգադպրոցի սանուհիներից Սառան տուն վերադարձավ ոսկե մեդալով և գավաթով, Սյուզաննան կանգնեց պատվո պատվանդանի երկրորդ, Նարեն՝ երրորդ աստիճանին՝ համապատասխանաբար արժանանալով արծաթե և բրոնզե մեդալների և գավաթների: Ելենան գրավեց պատվավոր չորրորդ տեղը:

Այժմ տեսանկարահանող սարքերի պակաս չկա, մարզիչները նկարահանել էին իրենց սաների ելույթները, և դրանք դիտելով, մարզածեւի մասնագետ լինել պետք չէ, որ կարծիք կազմես քաջարանցի փոքրիկ մարզիկների հաջող ելույթների և ինչու չէ, վարպետության մասին: Դրա վկայությունն է այն, որ մրցաշարի մասնակից երկրների ներկայացուցիչները քաջարանցի մարզուհիներին հրավիրել են մասնակցել իրենց մոտ կազմա-

կերպվող մրցումներին: Քաջարանի մարմնամարզուհիների մասնակցությունը միջազգային մրցաշարին հնարավոր դարձավ Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեորգյանի հովանավորության շնորհիվ, ինչի համար մարզադպրոցի տնօրենությունը և սաների ծնողները երախտագիտություն են հայտնում համայնքապետին: Սարգադպրոցի տնօրեն Մերուժան Աթայանը խնդրեց թերթի միջոցով իր շնորհակալությունը հայտնել նաև Քաջարանի արհեստագործական ուսումնարանի տնօրեն Արամայիս Առաքելյանին, ում բարի կամեցողությամբ մարզադպրոցի սաները յոթ տարուց ավելի իրենց մարզումներն են անցկացրել այդ կրթօջախի մարզադահլիճում: Սարգադպրոցի բասկետբոլի սեկցիան գործում է Լեռնաձորի դպրոցում, որի տնօրենությամբ Մերուժան Աթայանը երախտապարտ է աջակցության համար:

Ինչ վերաբերում է մրցանակակիր մարզիկներին և մարզիչներին, ապա նրանց համար Քաջարանի քաղաքապետարանում ընդունելություն կազմակերպվեց: Համայնքապետ Վարդան Գեորգյանը շնորհակալություն հայտնեց սաների մարզիչներին՝ հետևողական աշխատանքի, նրանց ծնողներին՝ իրենց երեխաների մարզումների համդեպ ուշադիր վերաբերմունքի համար: Նա մարմնամարզուհիներին մարզական նոր հաջողություններ մաղթեց և պարգևատրեց պատվոգրերով, հանձնեց հուշանվերներ:

Քաջարանի մարզադպրոցի տնօրեն Մերուժան Աթայանը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար իր խոսքում ընդգծելով այն միտքը, որ մարզադպրոցն իր գոյության տասը տարվա ընթացքում մշտապես արժանացել է քաղաքապետարանի աջակցության:

**ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

## Վարդավառը՝ Մեղրիում (12.07.15)



## Մարզի երեխաների ամառային հանգիստը

**Ամառային հանգիստը կազմակերպելու համար արդեն 10 տարի է՝ մարզի երեխաները հնարավորություն ունեն 33 պետություններից հանգիստը կազմակերպելու հանգստանալու հանրապետության «Լուսաբաց» և «Հասմիկ» ճամբարներում երեք հերթափոխով՝ 20-ական օրով: Հիմնականում ընդգրկվում են զոհված, Արցախյան պատերազմում հաշմանդամ դարձած, ծնողազուրկ, բազմազավակ ու սոցիալապես անապահով ընտանիքների 7-13 տարեկան երեխաները:**

Այս տարի առաջին հերթափոխը մեկնարկել է հունիսի 19-ին, որին մասնակցել է 70 երեխա: Երկրորդ հերթափոխը կընդգրկի հուլիսի 8-ից մինչև 27-ը ընկած ժամանակահատվածը, որին կմասնակցի 55 երեխա: «Երկրորդ հերթափոխին մարզի երեխաների թիվը 15-ով նվազել է, քանի որ Արցախից նույնպես կմասնակցեն այս հերթափոխին: Անցյալ տարի առաջին հերթափոխին նույնպես նվազել էր, քանի որ սիրիահայեր և ջավախահայեր են մասնակցել», – նշեց մարզպետարանի կրթության բաժնի գլխավոր մասնագետ Վովա Այվազյանը:

Երրորդ հերթափոխը կընդգրկի հուլիսի 27-ից օգոստոսի 15-ը ընկած ժամանակահատվածը, և մարզից կմեկնի 70 երեխա: «Ճամ-

բարային պայմանները լավ են, երեխաները հաճելի ժամանակ են անցկացնում, թեպետ սկզբնական շրջանում դժվարությամբ են հարմարվում: Դժվար հարմարվելու հիմնական պատճառը կարոտն է», – նշեց Վ.Այվազյանը:

Բացի պետություններից հաշվին ճամբարային հանգստից՝ Հայ ավետարանչական ընկերակցությունը Շուշիում կազմակերպում է ճամբար՝ հինգ հերթափոխով՝ յուրաքանչյուրը յոթ օր: Եկեղեցու միջոցներով բակային ճամբարներ են կազմակերպվում Կորիտում, Կապանում, Սիսիանում, որոնց մասնակցում է 60-ական երեխա:

Բակային ճամբար այս տարի նույնպես կկազմակերպվի Քաջարանում երեք հերթափոխով՝ յուրաքանչյուրը՝ 12 օր: Քաջարանի թիվ 1 և 2 միջնակարգ դպրոցներում անցկացվող ճամբարների ամեն հերթափոխին մասնակցում է 130-ական երեխա: Կապանում այս տարի բակային ճամբար չի լինի մշակույթի կենտրոնի վերանորոգման աշխատանքի պատճառով:

Թվով 40 երեխայի հանգիստ կկազմակերպի Հայ օգնության ֆոնդը:

«Գանձասար» ճամբարը վաղուց արդեն չի ծառայում որպես ճամբար, եւ, թերևս զարմանալի է այն երեւույթը, որ երեք խոշոր հանքարդյունաբերական ձեռնարկություն ունեցող մարզում երեխաների հանգիստը կազմակերպելու վայր չկա: Հուսով ենք, այդ հարցը երբեւէ լուծում կստանա:

Ի դեպ, նշենք, որ Հանրապետության «Լուսաբաց» և «Հասմիկ» ճամբարները նույնպես մասնավոր սեփականություն են, բայց ծառայում են մեր երեխաներին:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՆՈՒՍՆԱԿՆԵՐԸ: ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Հայկական պարեր՝ հունական բեմում



**Հունաստանի Սալոնիկ քաղաքում Ադրբեջանի, Ուկրաինայի, Սերբիայի և տեղի պարային խմբերի կողքին ազգային ավանդական և Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված պարեր ներկայացրին Սիսիանի «Գրանդ» և Մասիսի «Տավրոս» պարային խմբերը:**

«Սիսիս ավանդական պարերի» կազմակերպության նախաձեռնությամբ և «Հայ-Արտ» հայ-կանադական պրոդյուսերական կենտրոնի աջակցությամբ հուլիսի 8-ին և 9-ին նրանք մասնակցեցին կազմակերպված ավանդական պարերի միջազգային փառատոնին:

Ներկաներին արտասվելու չափ հուզել էր «Գրանդ» պարային համույթի «Մեկ դար» վերնագրված պար-բեմականացումը, որը ներկայացնում էր հայի 100 տարի առաջ

ապրած ցավը: Սիսիանի «Գրանդ» պարային ակումբի սաները «Մեկ դար» վերնագրված պար-բեմականացման միջոցով հույն հասարակությանը ներկայացրին 100 տարի առաջ խաղող ու ստեղծագործ կյանքով ապրող ու արարող, սեփական երկիր շենացնող հայ ժողովրդի կյանքը, որը խաթարվեց բուրբի ոճրագործ ձեռքով: «Փորձել էինք պարի միջոցով ներկայացնել, թե 100 տարի առաջ ինչ կատարվեց քրիստոնյա մեր ազգի հետ: Պարի սկզբնամասում հայ կանայք հաց են թխում, թել մանում, երեխաների դաստիարակությանը զբաղվում, խոտ հնձում, արտ ցանում... Դեռ ջարդերի, կոտորածի մասին լուրը հասնում է խաղաղ բնակչությանը, և խուճապ է սկսվում, – ասում է «Գրանդ» պարային համույթի գեղարվեստական ղեկավար

Արման Դավթյանը: – Պարի երկրորդ հատվածում արդեն հայի վերածննդի պահն է բեմականացված: Դատելով հանդիսատեսի հուզմունքից և հոտնկայս ծափահարություններից՝ կարելի է ասել, որ բեմականացումը միանշանակ հասանելի էր հանդիսատեսին»:

Մասիս քաղաքը ներկայացնում էր 23-ամյա հարուստ պատմություն ունեցող «Տավրոս» ազգագրական պարի համույթը: Ազգային ավանդական պարեր ու ժողովրդական երգեր ներկայացրին: «Աշխատեցինք մեր ավանդական պարերով ու երգերով հաճույք պատճառել մեր դարավոր հույն բարեկամներին, կարծում են՝ տեղացի հայերին և հույներին որոշակի հոգեւոր սնունդ փոխանցեցինք», – նշում է «Տավրոս» պարային համույթի գեղարվեստական ղեկավար Լյուդվիգ Պողոսյանը:

«Մեր երկու կուլեկտիվն այնպես ներկայացավ, որ մենք առաջին իսկ օրվանից բոլորի ուշադրության կենտրոնում էինք: Ավանդական պարերի միջազգային փառատոնի կազմակերպիչները օգոստոս և սեպտեմբեր ամիսներին եւս այսօրինակ փառատոնին մասնակցելու հրավեր կուղարկեն Հայաստան: Փառք ու պատիվ մեր երեխաներին, ովքեր կարողացան շատ պատշաճ կերպով ներկայացնել հայկական պարը, հայ մշակույթը», – ասում է «Հայ-Արտ» հայ-կանադական պրոդյուսերական կենտրոնի տնօրեն Արսեն Ավետիսյանը:

Մրցանակ է մասնակցության պատվոգիր ստացան բոլոր մասնակիցները:

Հայաստանը ներկայացնող պարային խմբերի ներկայացուցիչները մի քանի օր Հունաստանի ծովափնյա վայրերում հանգստանալու հնարավորություն ունեցան:

**ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

## «Առաջադեմ մեդիա տեխնոլոգիաների կենտրոն» հասարակական կազմակերպությունը հրավիրում է ուսուցման և աշխատանքի

- Ինչպե՞ս և որտեղ սովորել հեռուստատեսության և կինոյի հիմունքները
  - Ո՞րտեղ մասնագիտանալ այդ ոլորտում
  - Ո՞ւզում եք կարծ ժամանակում ձեռք բերել մասնագիտություն...
  - Ո՞ւզում եք գտնել հետաքրքիր և ստեղծագործ աշխատանք...
  - Ո՞ւզում եք սովորել և առավել ճիշտ ու արդյունավետ աշխատել...
- Ուրեմն՝ եթե դուք ստեղծագործ անհատականություն եք և ուզում եք իմանալ, թե ինչպես կարելի է պատշաճ մակարդակով իրականացնել հեռուստածրագրերի մտահաղացումներ, կարող եք դիմել և մասնակցել հեռուստատեսության հիմնական մասնագիտությունների անվճար ինտենսիվ դասընթացներին:**
- Դասընթացի մասնագիտություններն են՝
- ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՕՊԵՐԱՏՈՐԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ ԼԻԱԿԱՍԱՐ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍՈՒՆԱԺ**
- Այս ամենն այսօր Ձեզ հասանելի է...  
 Կուրսի տեղադրությունը՝ 2 ամիս է (2015թ. օգոստոսի 1-ից սեպտեմբերի 30-ը):  
 Ուսուցումն անվճար է:  
 Հաջողությամբ ավարտած ուսանողները կանցնեն աշխատանքի նորաստեղծ հեռուստաընկերությունում: **Ցանկացողները կարող են դիմել մեզ մինչև հուլիսի 27-ը հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ syunikonline@gmail.com**

## «Չարագան մախաձեռնություններ» հասարակական կազմակերպությունը առաջարկում է երկշաբաթյա վերապատրաստման դասընթացներ աշխատանք փնտրող երիտասարդների համար

- Դասընթացի նպատակն է՝**
- խթանել բնապահպանական մտածողությամբ օժտված մի նոր սերնդի զարգացմանը և բնապահպանական հիմնախնդիրների լուծման գործընթացներում, ինչպես նաև էկոլոգիական իրավունքների կիրարկման գործում նրանց ներգրավմանը,
  - նպաստել «կանաչ» մտածելակերպի կերտմանը, սեփական բնության ժառանգության գնահատմանը, առողջ և կայուն շրջակա միջավայր ունենալու անհրաժեշտության գիտակցմանը, բնապահպանական անվտանգության ու զարգացմանը:

## Դասընթաց 2. «Մարդու իրավունքներ և ժողովրդավարություն»

Դասընթացի նպատակն է մասնակիցներին տրամադրել գիտելիքներ մարդու իրավունքների, ժողովրդավարության սկզբունքների, սահմանադրության և քաղաքացիական հասարակության ձևավորման վերաբերյալ: Բացի այդ դասընթացը նաև միտված է նպաստելու մարդու իրավունքների պաշտպանությանը հետաքրքրված երիտասարդների համախմբմանը և պրակտիկ գործունեության ակտիվացման միջոցով մարդու իրավունքների պաշտպանությանը, արձագանքմանը և հանրային իրազեկման համակարգի կառուցմանը Սյունիքի մարզում:

Դասընթացներին կարող են մասնակցել 18-ից 25 տարեկան երիտասարդներ՝ ուղարկելով ինքնակենսագրությունը devino.ngo@gmail.com հասցեին:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2015թ. հուլիսի 30-ը:

Դասընթացները հաջողությամբ ավարտած երիտասարդները կստանան աշխատանքի հնարավորություն:

# Բաց Նամակ

**ԼՈՒՍԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ**

ք. Կապան, Թումանյան 16/18, հեռ.՝ 094-49-94-43



Հանրության ուշադրությանն են ուղղում հրավիրել մեր այժմյան Ազգային ժողովի պատգամավոր, նախկին քաղաքապետ Արմեն Կարապետյանի վարքագծին: Մի մարդու, որը 10 տարուց ավելի հալածում է հորս՝ երկրորդ կարգի հաշմանդամ, մի ոտից զուրկ 80-ամյա Վահրի Հայրունյանին, ամեն ձեռով փորձելով տիրել իր «դոլարի» հարեւանությանը գտնվող հողամասին, որի վրա շատ վաղուց աչք էր դրել: Այնքան վաղուց, որ մինչ խաբելով սեփականացնողին, արդեն պատ էր դրել այդ հատվածում: Ամեն անգամ ահաբեկում է, թե «քեզ ու կոնջր ավտոյի տակ կզցնեմ, տղայիդ վիզը ռուսաստաններում կտրել կտանամ»: Ամենաթողության այս մտնողությունը նրա լիտիությունը հասել է այն աստիճանի ծեր մարդու հանդեպ, որ նույնիսկ փողոցի անցողներն են մոտենում ու ասում, թե ինչու միջոցներ չենք առնում հորս վիրավորելու համար: Ընդհուպ հասավ նրան, որ փողոցում, երեւի մտածելով, թե իր թաղի տղաների հետ է խոսում, վիրավորեց ինձ, իհարկե հետո մեջը տղամարդկություն գտավ ներողություն խնդրելու՝ Սյունիքի մարզպետին իմ դիմելուց հետո:

Հողամասը, որը գտնվում է «Ոսկե Կապան» ռեստորանային համալիրի հարեւանությանը, գոյություն է ունեցել դեռևս 70-ական թվականներին: Ես այն ձեռք եմ բերել (զնել եմ) 1997թ.: Ներսուն կան բերքատու ծառեր, վարելահող: Ծնողներս երկուսն էլ հաշմանդամ, հավ ու ճիվ են պահում, մշակում այգին, իրենց ապրուստը հոգում այդ մի թիզ հողից: Աշխատավոր ժողովուրդ են, իրենց հալին տեր:

2008թ. մի գեղեցիկ օր քաղաքապետ Արմեն Կարապետյանը կանչեց, թե հողը հանրային սեփականություն է և դնում է աճուրդի: Մի շաբաթ պայմաններ առաջարկեց, որոնց չհամաձայնեցի: Մի օր կանչեց, թե 3մ հող տուր ինձ այդ հողամասից, թո հողը սեփականացնեմ, տամ քեզ: Համաձայնվեցի: Ցանկապատը 3մ առաջ տվեց:

Վերջերս ոմն Մարսելա, որը, ինչպես հետագայում պարզվեց, իր զոքանչն է, ոստիկանություն բողոք է ներկայացրել, թե շինարարություն է անում, և Վլադիկ Հայրունյանը չի թողնում այն իրականացնի:

|| **Հողամասը, որը գտնվում է «Ոսկե Կապան» ռեստորանային համալիրի հարեւանությանը, գոյություն է ունեցել դեռևս 70-ական թվականներին: Ես այն ձեռք եմ բերել (զնել եմ) 1997թ.:**

Դուք տեսեք Արմեն Կարապետյանի ախորժակը: Քաղաքապետ եղած տարիներին քաղաքի քարտեզը դրել է դեմը և որտեղ մի լավ տարածք կար իրենով արել: Լավ է արել, ինձ չկային: Հողամասի համարյա կեսը իրենով է արել զոքանչի անունով, և էլ բանից անտեղյակ: Դուրս եկավ, որ ես եմ գավթել իր հողը: Այսքան տարի լռելուց հետո հիմա եկել ոստիկանությունով ցանկապատը քանդել, առաջ է տվել ցանկապատից այն կողմ թողնելով ծերունեքիս վարած լոբին ու կարտոֆիլը, ծառերը: Ինչպիսի ախորժակ պետք է ունենա մարդը, որը աչքը տնկի հաշմանդամների ապրուստին: Իմ հարցին, թե «այս քաղաքը արդյո՞ք մենակ թոնն է», պատասխանեց, թե «եթե դու քաղաքապետ լինեիր, չէի՞ր անի»:

Սթափվեք, Աստու սիրուն, Աստուց վախեցեք: Ես չունեմ քո ախորժակը և գիտեմ չափը:

Ուրիշ ինչ սպասես տարրական բարոյականությունից զուրկ այս մարդուց, որը կին ու աղջիկներ ունի, բայց հարգել չգիտի դիմացը կանգնած կնոջը: Հարգելիս, նորից հիշեցնեմ, որ այս քաղաքը թոնն է այնքան, ինչքան իմն է:

Խնդրում են պատկան մարմիններին՝ կարգի հրավիրել անձեռնմխելի այս վայ պատգամավորին և պահանջում են հատուցում ինձնից խլածի դիմաց: Այն, ինչ վերցրել ես, զին ունի, ես դրա դիմաց վճարել եմ և ոչ թե խաբեությանը զավթել: Ես եմ որոշում իմ ունեցածի գինը, և իմ լոբին ու ծառերը ի՞նչ արժեն, դարձյալ իմ որոշումն է:

**02.07.2015թ.**

## Խմբագրության կողմից Տպագրվում է առանց որևէ միջամտության:

## Այունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՆ ԱՆԽԱՐԳ»

ՍԱՀՄԱՆՈՒԿ ԴԱՏԱՍԵՆՏԱՎՈՐՈՒԹՅԱՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Ծախումյան 20/32: Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր փճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Ⓒ ճշմարիտ տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայական՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1700, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.07.2015թ.: